

բոյսերս տալ, որ սունկերու նման են, որոնց մէջ շատ թունաւոր տեսակներ կան:

Ինչ ալ ըլլայ գլխաւոր պատճառը այսպիսի թունաւորութեանց, պէտք է միշտ, մանաւանդ տաք եղանակներուն մէջ, զգուշանալ եփուած հին միս ու տէլէն՝ որ երկար ժամանակ օդուն մէջ մնացեր է, ու զգալապէս թթուեր է և շատ կտրժիչ բորբոսեր է: Վիւրին հնարքներ կան հում ու եփուած միսերն երկար ատեն պահելու, որոնց վրայ կ'անցնինք խօսելու:

ՃԱՐՏԱՐՈՒԹԻՒՆ

Առողջարար և քիւր քնակարանք:

Պ. Լ. Լիւ, վաղեմի աշակերտ Ռաբիդու բազմարուեստից դարբոցին և կայսերական ճարտարապետ կամրջաց և ճանապարհաց ու գլուխ ճարտարապետաց հռովմէական երկաթուղւոյն 'ի Պոլնեա, անցեալները հրովարտակ ընդունեցաւ Վաղղիոյ տէրութենէն գեղեցիկ գիւտի մը համար, որն որ մեծաժեծ օգտակարութիւններ պիտի ընծայէ քաղաքաց և գիւղից հասարակաց առողջութեանը, ինչպէս նաև գիւրութիւն և խնայութիւն գինուորաց բանակելուն, և նոր յարգ մը պիտի տայ այնպիսի նիւթոյ մը, որն որ ինչուան հիմա ոչ յարգ ունէր, և ոչ ալ կարգաւորեալ գործածութիւն, և ամէն ծովեղերեայ տեղուանք առատապէս կը գտուի:

Եւս նիւթս է ծովու բարակ մամուռը, որ ինչուան հիմա ապակեղէն ու խեցեղէն անօթները գետեղելու կը գործածուէր: Եւս մամուռին վրայ եղած քննութիւններէն իմացուեցաւ որ անհաղորդական է ջերմութեան, և հետեաբար թէ տաքին և թէ ցրտոյն հաւասարապէս կ'ընդդիմանայ. բաւական թանձրութեամբ խցերն յատակելով՝ կը պաշտպանէ զանոնք ազմկաց դէմ:

գրեթէ անկիղելի է, կամ գոնէ ամենեւին բոցով չվառիր, և երբ կրակն առնու զինքը՝ ինքնիրեն շուտ մը կը մարի. վերջապէս իր մասնաւոր յատկութենէն և վրայի ողորկութենէն միջատաց բնակարան չկրնար ըլլալ:

Փայտաշէն տները ամառը տաքէն անբնակելի կ'ըլլան, և որչափ ալ ջանք ըլլուի հով բանեցընելու՝ գիշերներն անտանելի կ'ըլլան և բնակիչները տաքէն կը խղզուին: Չար քան զայս են զինուորաց բնակարանները, որ թէ վրանի տակ բնակին և թէ տնակներու մէջ՝ ամառն ու ձմեռը շատ նեղութիւն կը քաշեն և հիւանդութեանց ենթակայ կ'ըլլան, մանաւանդ երբ այս տնակներուն տանիքը մետաղէ կամ նոյն խեղճմիտրէ ըլլան:

Եւրոպայի անպատեհութիւններս կը վերցուին թէ որ արեւուն ճառագայթիցը դէմ խցերուն կամ տնակներուն տանեացը տակն այնպիսի նիւթոյ խիտ կարգ մը դրուի, որ անհաղորդական ըլլայ ջերմութեան: Փայտածուխն այս բանին շատ լաւ կրնար ծառայել, բայց սուղ կ'ըլլայ. յարգն ու չոր խտան այս անպատեհութիւնն ալ ունին՝ որ դիւրավառ են, և բազմաթիւ միջատաց բնակարան կրնան ըլլալ, որոնք նոր տանջանք մը կ'աւելցընեն բնակչաց վրայ: Իսկ ծովու մամուռը համեմատութեամբ խոտին նուազ գին ունի, և ամէն ծովեղերեայ տեղուանք առատ կը գտուի. ուստի ամէն առաւելութիւն ունի այս անպատեհութեանցս դէմն առնելու: () Իննակի համար, այս մամուռը անուշ ջրով լուալէն ետև կրնայ գեղի տանց կղմինտրներուն տակը դրուիլ, որով այն տները թէ տաքէն և թէ ցրտէն կը պաշտպանուին. պատերն ալ կրնան անթափանցելի ըլլալ տաքութեան և ցրտութեան, եթէ մայր պատէն քիչ մը հեռու ուրիշ պատ մըն ալ շինուի զուգահեռական, և անոնց մէջ տեղը ճնշած մամուռ դրուի: Եւս կերպով շատ կը լաւցուին ամառնային գիւղացնացութեան թեթեւ բնակարանները և ասոնց նման ուրիշ տները, որ

Հասարակօրէն ազիւսէ շինուելով՝ ամսուն արեւուն ճառագայթներէն փռան պէս տաք կ'ըլլան և ձմեռը ջերմութիւն ճառագայթելով՝ սաստիկ ցուրտ կ'ըլլան : (Ժ) Է որ այս շինուածոց ոչ միայն վրան ու չորս կողմը մամուռ պատուի , այլ նաեւ յատակն ալ , ձմեռն այնչափ տաք կ'ըլլայ , որ ածուխի ու փայտի մեծ խնայութիւն կը պատճառէ :

ԲՆԱԿԱՆՔ

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՆՈՐԱԼՈՒՐԻ

Գ

Արարչութեան ընդերաց մէջ ոյժ մը կը խաղայ 'ի յաւիտենից , որ ջերմութեան ու լուսոյ պէս ոչինչ նուազ զօրաւոր է , և անոնց ժամանակակից , գույն , թերեւս և պատճառ : Բայց նոր ժամանակներուս ոգին եղաւ որ զայն ծածկող պղնձի վարագուրը վեր առաւ , և նախանձոտ բնութեան ձեռքէն յափըտակեց զայն , և ոչ միայն անով պատճառած անհամար երեւոյթներուն լոյս հաղորդեց , այլ նաեւ քաղաքական յառաջագիմութեան ալ անսպառելի աղբիւր մը շնորհեց : Այս այն տիեզերական հոսանիւթն է , որուն առջևն ոչինչ էն միջոցի հեռաւորութիւնները , որուն խորհրդաւոր շառաւիղներէն ազգք և ազինք զարթեան 'ի նոր կեանս , և աշխարհքիս մէկ ծայրէն մէկալ ծայրը կը խօսակցին իրարու հետ , պատգամաւոր զրկելով այս ծածուկ զօրութիւնը , որուն յանձնուած կը կարծուի տիեզերաց տնտեսութիւնը , և թերեւս մեզ մէջ շատ հեռու չէ այն ժամանակը՝ որ ինքը փոխանակելով բնութեան ամէն զօրութեանցը , պսակէ զմարդկութիւնը բիւրաւոր և նորանոր յաղթանակներով քաղաքականութեան և յառաջագիմութեան :

Այս զարմանալի հոսանիւթս էլէրրախանութիւն կ'ըսուի , յունական էլէր-

րրոն բառէն , որ սաբ ըսել է . վասն զի առաջին անգամսաթիւն վրայ յայնուեցաւ՝ Վերիտոսէ 600 տարի առաջ : Բայց այս երեւոյթս շատ դարեր մնաւ , ջութեան տակ թաղուեցաւ , ու միայն անցեալ դարուն մէջ վերանորոգեցաւ բազմապատիկ երեւոյթներով , և բնութեան ընդհանուր ու ամենէն զօրաւոր ոյժ մը ճանչցուեցաւ : Ինչէն ետեւ սկսան մարդիկ հարցնել բնութեան փորձոյ միջնորդութեամբը , առանց միտք դնելու ամուլ տեսութեանց որ երկու հազար տարի մարդկեղէն միտքը կաշկանդեր էին և ջլատեր , ու հրաժարեցան այն երեւութից պատճառները գուշակելէն , և միայն իրենք զիրենք տուին եղածը քննելու :

Արեմն տեսներ հիմա թէ ինչ պատասխան տուաւ ելեքտրական հոսանիւթը փորձառական գիտութեան հարցմանցը :

Կայծակն ինչ է : — Ելեքտրականութիւն է . վասն զի մեր ելեքտրական մարտկոցներէն ալ շանթ կը թօթափենք , ինչպէս մրրկալից ամպերը կը թօթափեն , և կրնանք ամպերէն , օդէն , երկրէս ելեքտրականութիւնն յափշտակել ու արուեստական մարտկոցներուն տեղ փոխանակել : Այլ երջապէս այս ծանօթութիւնն առաջնորդեցին Ֆրանքլինի շանթարկելի օգտակար հնարիցը , որ

Յամպոց կորդեաց նա ըզշանթիս կայծականց ,
Եւ զգաւազան յանագորոյն ի բռնանց :

Տեսնելով որ ելեքտրականութիւնը տաստիկ ուժով կը ներգործէ կենդանեաց , բուսոց ու մարդուս վրայ , բնախօսք շատ մը կարեւոր երեւութից մեկնութիւնն հարցուցին , և լիուրի պատասխանն առին : Այլ միայն լէյտեան անօթիւն տուած ցնցումը և կայծերուն խայթը , այլ բոլոր կենդանական գործարանաւորութիւնն , այսինքն զգայականութիւնը , շարժումը , մարսողութիւնը , հիւլթոց անջատումը , սննդաւութիւնը , և գործարանաց զարգացումը , կենսունակ էակին ելեքտրականութեանն իշխանութեանը տակն էն :